երբեք պակաս չէին հիւրերը: Հազիւ կը պատահէր, որ պողոտայով մէկը անցնէր ու որպէս հիւր սրտանց չմեծարուէր նրանց մօտ: Էջմիածնի պատրիարքը, եպիսկոպոսներ, հոգեւորականներ եւ աշխարհականներ իրար խառնուած՝ շարունակ ներս ու դուրս էին անում նրանց մօտ: Ամէն մէկը կարող է արդէն պատկերացնել, թէ ամառուայ այն սոսկալի շոգին ու այրող տապին որպիսի զովութիւն պիտի պատճառէին պտուղն ու խաղողը անցորդին, եւ թէ՝ նա, այդ անցորդը, ինչպիսի շնորհակալութեամբ պիտի դուրս գար այդուց ու շարունակէր իր ճամբան: Կայ նաեւ այն, որ այս երկրի ժողովուրդը պտուղը եւ խաղողը լաւագոյն դեղ ու դարմանն է համարում ամէն մի հիւանդութեան դէմ: Հէնց որ մէկը մի քիչ հիւանդանում է, իսկոյն պտուղ կամ խաղող է պահանջում, եւ կամ երկուսն էլ միասին: Մինչեւ իսկ պնդում են, որ անգամ մահուան մահիճում գտնուող մարդու վրայ բարերար ազդեցութիւն ունի այս համաշխարհային դարմանը»:

Հաքստհաուզէն ասում է մի այլ առիթով (Ա. 210).

«Աբովեանի մեծ հայրը դեռ այսօր էլ ապրում է շրջակայքի բոլոր ծերերի յիշողութեան մէջ: Աբովեանը պատմում էր՝ երբ նա դեռ երեխայ է եղել, Երեւանից շատ յայտնի բարեկամներ սովորութիւն են ունեցել նրա ծնողներին այցելելու: Նստելիս են եղել այգում, ծառերի ստուերի տակ, ուրախանալու եւ զուարճանալու: Նա, մանուկ Աբովեանն էլ, ծառայելիս է եղել հիւրերին: Սրանք թախիծով են յիշելիս եղել իրենց հին բարեկամին՝ Աբովին: «Ամէն ինչ», սովորութիւն է ունեցել ասելու ծերունի Աբովը իր հիւրերին, «որ Աստուած տալ կարող է մեղաւոր մարդուս, ունիմ ես — զաւակներ, հարստութիւն եւ բոլոր մարդկանց սէրը: Այդ պատճառով էլ ես այս այգին Նրան եւ աղքատներին եմ նուիրել, որպէսզի ամէն ոք վայելի եւ ուրախանայ»:

Շարունակութեան մէջ առաջ է բերուած Աբովի արտաքինի նկարագրութիւնը, նրա հագուստը, նիստուկացը:

«Թագաւորի տեսք ունէր նա,— պատմելիս են եղել ժամանակակիցները,— նրա հարստութիւնը ծով էր, ինչպէս եւ՝ նրա սիրտը»:

Մի ուրիշ առիթով, երբ Հաքստհաուզէն տալիս է Աբովեանի ծննդավայր Քանաքեռ գիւղի նկարագրութիւնը, ուր նա գնացած է եղել իր մեծանուն հայ բարեկամի հետ միասին, հետեւեալն է պատմում Աբովեան տոհմի մասին, տեղեկութիւններ քաղելով, հարկաւ, Խաչատուր Աբովեանից.—

«Քանաքեռի ծագման մասին գոյութիւն ունի գիւղական այն աւանդութիւնը (պատմական հին վաւերագրերը, արտօնագրերը եւ տոհմային թղթերը պարսկական վերջին՝ 1825-ի (պիտի լինի՝ 1828) պատերազմին կորել են), թէ՝ Աբովեանի նախահայրը, վեց սերունդ առաջ, մի հիւսիսային վայրից անունը չգիտեն — իր մարդկանցով ու հարեւաններով եկել է Երեւանի խանի (սարտարի?) մօտ, հալածուած թշնամիներից (լեզգիներից?) ու խնդրել նրանից թոյլտուութիւն՝ բնակութիւն հաստատելու նրա հողերի վրայ, որ եւ յարգուել է: Այսպիսով հիմնուել է Քանաքեռը: Ցիշեալ առաջնորդի անունը եղել է Աբով: Սա ծագում էր մի հին ազնուական տնից...Թիֆլիսում, Ղարաբաղում եւ Լօռիում էլ կան այդ անունով եւ միեւնոյն ծագումով ընտանիքներ: Աբովի որդու անունն էր Վիրապ, սրա որդու անունը՝ նորէն Աբով: Ահա այս պարագան է պատճառը, որ Աբովեանների ընտանիքին է պատկանում Քանաքեռի գիւղապետութեան ժառանգական իրաւունքը: Սակայն, դա բնաւ չէ կրում կալուածատիրական եւ կամ ճորտատիրական բնոյթ, այլ հիմնուած է միայն ոստիկանական իշխանութեան վրայ»:

Այն միջոցին, երբ Հաքստհաուզէն իր բարեկամի հետ Քանաքեռ է այցելում, Աբովեանի հայրը մեռած է լինում, իսկ մայրը՝ դեռ ողջ: Այդ կապակցութեան մէջ խօսելով առհասարակ հայ կնոջ դիրքի մասին, Հաքստհաուզէն ասում է.

«Երբ վախճանւում է տան մեծը՝ հայրը, նրա կինը ձեռք է բերում ամուսնու դիրքը եւ իրաւունքները: Նրա ընտանիքի մօր հանդէպ եւս ցոյց է տրւում այն ակնածութիւնը, ինչ որ տան նոր նահապետի հանդէպ: Աբովեանի մայրը եւս նոյն այդ դիրքի մէջ էր: Մի դիրք, որպիսին չէ վայելում կինը Արեւելքի եւ ոչ մի երկրում,— այո՛, աւելի պատկառիկ, քան